

**Հաղորդագրություն վարչակարգին ներխուժման շուրջ  
Ռաճա՛ Նասերին տունը և կնքել այդ կարմիր մոմով**

Վարչակարգին պատկանող ապահովական ուժ մը ներխուժեց մի քանի օրեր առաջ Ազգային Համակարգող Մարմնի քարտուղար՝ պր Ռաճա՛ Նասերին տունը Հալեպ քաղաքին մէջ, ուր քննութեան ենթարկեց տունը և խառնեց իր պարունակութիւնը, ինչպէս նաև կնքեց տունը կարմիր մոմով: Ժողովրդավարական Փոփոխութեան Ուժերու Ազգային Համակարգող Մարմինը կը դատապարտէ այս ամօթալի արարքը, որ կու գայ համակարգուած քարոզարշաւի մը ընթացքին իրագործուած վարչակարգին պատկանող ապահովական սպասարկութիւններուն կողմէ, աղօտելու բոլոր խաղաղական և քաղաքացիական քաղաքական գործիչներուն պատկերը, որոնք կը պաշտպանեն իրենց ժողովուրդին արդար դատերը և մարդային իրաւունքները՝ Սուրիոյ մէջ, նպատակ ունենալով կցել իրենց կեղծ մեղադրանքներ, օրինակի համար՝ համագործակցիլ ահաբեկչական և զինուած խումբերու հետ, որպէս նախերգանք իրենց ներկայացնելու ահաբեկչական դատարանին: Այս արարքը վարչակարգին ուժերուն կողմէ կը հաստատէ կրկին թէ՛ եղբայր Ռաճա՛ Նասերը, որ ձերբակալուեցաւ կամայականօրէն 20/11/2013-ին մայրաքաղաք Դամասկոսի կեղրոնը, դեռ կը մնայ ձերբակալուած հակառակ վարչակարգին ղեկավարներուն ուրացումին, հետեւաբար, մենք կը կրկնենք մեր պահանջքը բոլոր տարածաշրջանային և միջազգային ացղեցիկ կողմերուն, միջամտելու անմիջապէս ճնշում կատարելու վարչակարգին վրայ, որպէսզի ազատ արձակէ եղբայր Ռաճա՛ Նասերը և Համակարգող Մարմնի իր ընկերները, ինչպէս բոլոր քաղաքական կալանաւորները և առեւանգուողները ապահովական ուժերուն կողմէ:

Ազատութիւն Ռաճա՛ Նասերին

Ազատութիւն Ապտըլ Ազիզ Խէյյերին, Իյէս Այյաշին և Մահէր Թահհանին

Ազատութիւն Ամանլ Նասրին, Եարա Ֆարէսին, Ռամի Հըննաուիին և Օմար Օպէտին

Ազատութիւն բոլոր քաղաքական կալանաւորներուն վարչակարգին բանտերուն մէջ

Տեղեկատուական գրասենեակ - Ազգային Համակարգող Մարմին

10/04/2014